224 Աչքերս եմ բացել Քրիստոսի խաչի տակ

1. Աչքերս եմ բացել Քրիստոսի խաչի տակ
Ու թափել արցունքներ մեղքերի թողության:
Նայվածքդ լռին աչքերիս մեջ սուզվում,
Ասում է՝ սիրելիս, զղջումդ եմ ուզում:

Ի՞նչ իմանայի, որ փնտրում ես ինձ
Ու միացնում ես բաժան սրտերին,
Հիմա փակ սրտիս փեղկերն եմ բացում
Ու խաչիդ առջև սիրտս դատարկում:

2. Աշխարհում այս մեծ չգտա մի դուռ,
Բարիք չհասավ այս կյանքում մի բուռ,
Մարդիկ չեն կարող վշտերս ամոքել,
Նրանցից հաճախ զրկանք եմ կրել:

3. Քո կյանքն ես կապել փշրված սրտիս հետ,
Անպտուղ անցած օրերին իմ խենթ,
Ահա մարում ես պարտքերն իմ բոլոր
Քո սուրբ արյունով, անմեղ արյունով:

4. Հիմա չեմ կարող առանց Քեզ ապրել
Ու Քեզնից հեռու ուրիշ սեր փնտրել,
Դու ես սկիզբը և վերջը իմ կյանքի,
Այս է լուծումը գալիք օրերի: